ցայսօր մէջ շուրջապատեալ թշնամեաց իւրեանց առանց օգնականութեան յումեքէ։

Մինչդեռ իշխանն դանադհարու յազգէն Աղվանից 'ի ժամանակի երջանկութեան յազգին պարսից և 'ի ժառանգաւոր թագաւորութեամբն 'ի սերնդէ Սէֆիէ Եղան դանադհարու երկոտասան հազար աղքատ զօրօք, որ բազմիցս ի նոցանէ բոբ ոտիւք և ձին առանց թամբ եկին և հալաքեցին 80000 հազար երկաթպատ զօրքն պարսոց 'ի քաղաքն խսպահան, փակեցին դրունս քաղաքին մուտն կերակրոց մինչ բիւրս բիւրոց սովմամահ եղեն, կատարածն մատնեցաւ թագաւորութիւն քաղաք և իբրև բոլոր աշխարհն պարսոց 'ի ձեռն Աղվանից Նադրղուլի արտախուրայ գործն, ապստամբեցաւ 'ի հօրէ, սպան զհօր եղբայրն, եմուծ զինքն 'ի պաշտօն Շահթամազի, վարեաց աղվանք 'ի յաշխարհէն պարսոց, թափեաց մասն յաշխարհին, որ ըմբռնեալ ունէին Օսմանցիք, եւ 'ի պերսու և եմուտ 'ի հնդիկս, յաղթահարեաց ընդ ինքն յանդիմանօղաց, հաւաքեաց հարստութիւն բազում հանդերձ համբաւ արիութեան մինչև անուանեցաւ կայսր այսինքն Շահուն Շահ միջոց միմիայն քսան ամ ժամանակաւ։

Քարիմխան յազգէն Բաքարիացուց, որ սկզբանէ ոչ յաւելի զօրութեամբ քանթէ Մէլիք Յովսէփն աղվանից տիրապետեաց բոլոր պարս արաղ ատրպատական յաշխարհ և մխիթար